ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

0010, ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 5

N 12/2(5)-25
«11» 03 2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սիմոնյան,

ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված կարգով՝ ներկայացնում եմ ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Հովիկ Հովսեփի Աղազարյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին միջնորդագիրը և պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծը:

Առդիր՝ միջնորդագիրը՝ «28» թերթ, ՀՀ Ազգային ժողովի որոշման նախագիծը՝ «1» թերթ:

Հարգանքով,

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ՝ ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

0010, ք. Երևան, Վ. Սարգսյան փ. 5

N 12-285-23
«11» 03 2025 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ա Գ Ի Ր

ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Հովիկ Հովսեփի Աղազարյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն համաձայնություն տալու մասին

1. ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննվող թիվ 62218423 քրեական վարույթով նախաքննության ընթացքում տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Սլավիկ Կարապետյանն իր կնոջ հոր՝ Աշոտիկ Կամավոսյանի խնդրանքով 2023 թվականի օգոստոսի 8-ին դիմել է իր մտերիմ Սլավիկ Պողոսյանին, որպեսզի նա իր հերթին դիմի պաշտոնատար անձ հանդիսացող, ՀՀ օրենսդիր իշխանության ներկայացուցչին՝ առանձնապես խոշոր չափերով՝ 200.000-300.000 ԱՄՆ դոլար գումարի դիմաց օգտագործելու ՀՀ ՍԱՏՄ պաշտոնատար անձանց նկատմամբ ունեցած ենթադրյալ ազդեցությունը՝ վերջինների կողմից իրենց ծառայողական լիազորություններն օգտագործելով Աշոտիկ Կամավոսյանի օգտին ապօրինի գործողություն կատարելու, այն է՝ առանց համապատասխան փաստաթղթերի կամ կեղծ փաստաթղթերով գյուղատնտեսական կենդանիներ արտահանելու գործընթացը կազմակերպելու համար:

Ստացված տվյալների համաձայն՝ ՀՀ օրենսդիր իշխանության ներկայացուցչի հետ հանդիպման վերաբերյալ պայմանավորվածություն ձեռք բերելուց հետո Աշոտիկ

Կամավոսյանը և Սլավիկ Պողոսյանը նույն օրը մեկնել են ՀՀ Գեղարքունիքի մարզ, որտեղ Սլավիկ Պողոսյանը հանդիպում և քննարկում է ունեցել ՀՀ օրենսդիր իշխանության ներկայացուցչի հետ, ով ընդունել է վերոնշյալ առաջարկը:

Քրեական վարույթով ստացված հիշյալ փաստական տվյալների հաշվառմամբ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեի քննիչը ներկայացրել է առերևույթ հանցանքի մասին հաղորդում, որի հիման վրա 2023 թվականի դեկտեմբերի 7-ին ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ՀՀ քրեական օրենսգրքի 438-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 439-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 46-439-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով, 435-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով, 437-րդ հոդվածի 1-ին մասով նախաձեռնվել է թիվ 62279123 քրեական վարույթը:

2. Բացի այդ, 2024 թվականի նոյեմբերի 27-ին, ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ստացվել է ՀՀ քննչական կոմիտեում քննվող թիվ 44-0090-23 քրեական վարույթն իրականացնող քննիչի հաղորդումը, որով փաստվել է, որ քրեական վարույթի ընթացքում իրականացրած թվային խուզարկության ժամանակ հայտնաբերվել են տեսաձայնագրություններ, որոնց ուսումնասիրությամբ պարզվել է, որ Արամ անունով քաղաքացին 2024 թվականի հունվարի 20-ին դիմել է Հայկ Նազարյանին՝ հայտնելով, որ 2021 թվականին մաս-մաս, ընդհանուր՝ 23.000 ԱՄՆ դոլար և 300.000 ՀՀ դրամ է տվել պաշտոնատար անձ հանդիսացող, ՀՀ օրենսդիր իշխանության ներկայացուցչին՝ իր օգտին գործողություններ կատարելու, այն է՝ իրավասու պետական մարմինների կողմից վթարային վիճակում գտնվող դպրոցը քանդելու թույլտվություն ստանալու, այդ հողատարածքի մի մասի վրա դպրոց կառուցելու, իսկ մյուս մասի վրա՝ պաշտոնատար անձ հանդիսացող, ՀՀ օրենսդիր իշխանության ներկայացուցչի օգնությամբ բազմաբնակարան բնակելի շենք կառուցելու թույլտվություն ստանալու համար:

Հաղորդման հիման վրա նույն օրը ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում ՀՀ գործող քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով (համապատասխանում է 2003 թվականի օգոստոսի 1-ին ուժի մեջ մտած և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժը կորցրած ՀՀ քրեական օրենսգրքի 311-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետին) և ՀՀ գործող քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 1-ին մասով (համապատասխանում է 2003 թվականի օգոստոսի 1-ին ուժի մեջ մտած և 2022 թվականի հուլիսի 1-ին ուժը կորցրած ՀՀ քրեական օրենսգրքի 312-րդ հոդվածի 1-ին մասին) նախաձեռնվել է թիվ 62298224 քրեական վարույթը:

2024 թվականի դեկտեմբերի 17-ին որոշում է կայացվել թիվ 62298224 քրեական վարույթը թիվ 62279123 քրեական վարույթին միացնելու մասին:

Քրեական վարույթի ուսումնասիրությամբ պարզվել է, որ ձեռք են բերվել փաստական տվյալներ, որոնք հիմք են տալիս ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Հովիկ Աղազարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 438-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով հարուցել հանրային քրեական հետապնդում, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի պահպանմամբ 2025 թվականի մարտի 7-ին հսկող դատախազի կողմից ներկայացվել է առաջարկություն քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող Հովիկ Աղազարյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն ստանալու միջնորդությամբ հանդես գալու:

Ստորև ըստ դրվագների ներկայացվում են քրեական վարույթով պարզված ենթադրյալ հանցանքների դեպքերը, ինչպես նաև այդ հանցանքների կատարումը վկայող փաստերը, որոնք հիմք են տալիս գալու հետևության այն մասին, որ Հովիկ Աղազարյանի նկատմամբ անհրաժեշտ է հարուցել քրեական հետապնդում:

1. Մասնավորապես, ապօրինի վարձատրության դիմաց պաշտոնատար անձի նկատմամբ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու դրվագով պարզվել է, որ ՀՀ ՆԳՆ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության Արմավիրի մարզի հաշվառման-քննական բաժնի ավագ տեսուչ Սլավիկ Կարապետյանն իր կնոջ հորը՝ Աշոտիկ Կամավոսյանին ծանոթացրել է իր ընկեր Սլավիկ Պողոսյանի հետ՝ նրա մտերիմ, ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Հովիկ Աղազարյանի օգնությամբ՝ գործող իրավակարգավորումների՝ ՀՀ կառավարության՝ 2010 թվականի հոկտեմբերի 21-ի թիվ 1442-Ն որոշմամբ և ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի՝ 2021 թվականի հունվարի 26-ի թիվ 46-Ա հրամանով նախատեսված կարգերի շրջանցմամբ՝ առանց համապատասխան փաստաթղթերի և առանց կենդանիներին կարանտինացնելու, 150.000-200.000 գլուխ գյուղատնտեսական կենդանիներ Արաբական Միացյալ Էմիրություններ արտահանելու գործընթացը գումարի դիմաց կազմակերպելու համար:

Այդ նպատակով Աշոտիկ Կամավոսյանը 2023 թվականի օգոստոսի 8-ին Սլավիկ Պողոսյանի հետ մեկնել են Գեղարքունիքի մարզի Սևան քաղաք՝ Հովիկ Աղազարյանին հանդիպելու նպատակով:

Հովիկ Աղազարյանի հետ առանձնազրույցի ընթացքում Սլավիկ Պողոսյանն Աշոտիկ Կամավոսյանի անունից առաջարկել է 200.000-300.000 ԱՄՆ դոլար՝ 150.000-200.000 գլուխ գյուղատնտեսական կենդանիների արտահանման գործընթացը կազմակերպելու դիմաց: Իր հերթին Հովիկ Աղազարյանը պատրաստակամություն է

հայտնել մտածել առաջարկի շուրջ և գործընթացն իրագործելու նպատակով պաշտոնատար անձանց հետ ձեռք բերել պայմանավորվածություններ:

Հաջորդ օրը՝ 2023 թվականի օգոստոսի 9-ին, Հովիկ Աղազարյանը զանգահարել է Սլավիկ Պողոսյանին և առաջարկել հանդիպել ՀՀ Ազգային ժողովի վարչական շենքի մոտ՝ Երևանի Սիրահարների այգում: Համաձայնելով առաջարկին՝ Սլավիկ Պողոսյանը նշված վայրում միայնակ հանդիպել է Հովիկ Աղազարյանին, որի ընթացքում Հովիկ Աղազարյանը հայտնել է, որ գործընթացն իրագործելու նպատակով արդեն իսկ պայմանավորվածություններ է ձեռք բերել պաշտոնատար անձանց հետ, սակայն չի հստակեցրել, թե ում հետ, որից հետո գործընթացն սկսելու համար պահանջել է 100.000 ԱՄՆ դոլար գումար՝ նշելով, որ գումարի մյուս մասը՝ 100.000 ԱՄՆ դոլարը (200.000 ԱՄՆ դոլարը համարժեք է 77.292.000 ՀՀ դրամին) կպահանջի հետագայում՝ գործարքի մեկնարկից հետո: Ընդ որում, Հովիկ Աղազարյանը հայտնել է, որ նշված գումարի դիմաց կարող են արտահանել անսահմանափակ քանակով կենդանիներ:

Հովիկ Աղազարյանի առաջարկը Սլավիկ Պողոսյանը փոխանցել է Աշոտիկ Կամավոսյանին, ով համաձայնել է առաջարկված պայմաններին:

Հաջորդ օրը՝ 2023 թվականի օգոստոսի 10-ին, պայմանավորվածության համաձայն՝ Սլավիկ Պողոսյանը և Աշոտիկ Կամավոսյանը ՀՀ Ազգային ժողովի վարչական շենքի մոտ՝ Երևանի Սիրահարների այգում հանդիպել են Հովիկ Աղազարյանին, որից հետո Աշոտիկ Կամավոսյանը տեղեկացրել է, որ կարողացել է հավաքել ընդհանուր՝ 20.000 ԱՄՆ դոլար գումար, ուստի առաջարկել է այն փոխանցել Հովիկ Աղազարյանին, իսկ պայմանավորված գումարի մնացած մասը՝ վճարել կենդանիների յուրաքանչյուր խմբաքանակի արտահանման ժամանակ: Հովիկ Աղազարյանը, սակայն, առաջարկից վրդովվել է, նշել, որ իրենց նախնական պայմանավորվածությամբ որոշված գումարի չափը հաշվի առնելով՝ ինքն արդեն իսկ պայմանավորվածություններ է ձեռք բերել պաշտոնատար անձանց հետ, ուստի հրաժարվել է ստանալ 20.000 ԱՄՆ դոլար գումարը:

Այսպիսով՝ պարզվել է, որ Հովիկ Աղազարյանը, լինելով ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ օրենսդիր իշխանության ոլորտում իրականացնելով իշխանական լիազորություններ, այդկերպ՝ հանդիսանալով պաշտոնատար անձ, անձամբ իր համար պահանջել է ապօրինի վարձատրություն, որպեսզի օգտագործի այլ պաշտոնատար անձի նկատմամբ իր ենթադրյալ ազդեցությունը, ինչի արդյունքում տվյալ պաշտոնատար անձն իր հերթին ապօրինի վարձատրությունը տվողի օգտին կատարի ակնհայտ ապօրինի գործողություն:

Վերոգրյալը հիմնավորվել է ստորև թվարկված ապացույցներով.

1.1) ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2023 թվականի մայիսի 24-ի որոշման հիման վրա Սլավիկ Կարապետյանի նկատմամբ իրականացված «թվային՝ այդ թվում

հեռախոսային հաղորդակցության վերահսկում» և «ներքին դիտում» գաղտնի քննչական գործողությունների արդյունքում ձեռք բերված տվյալներով պարզվել է, որ Սլավիկ Կարապետյանը Սլավիկ Պողոսյանին խնդրել է կազմակերպել իր կնոջ հոր՝ Աշոտիկ Կամավոսյանի հանդիպումը Հովիկ Աղազարյանի հետ, որից հետո Աշոտիկ Կամավոսյանը Սլավիկ Կարապետյանին պատմել է, որ Սլավիկ Պողոսյանն իր ներկայությամբ զանգահարել է Հովիկ Աղազարյանին և պայմանավորվածության համաձայն վերջինիս հետ հանդիպել են Սևան քաղաքում: Հանդիպման ընթացքում Հովիկ Աղազարյանը հայտնել է, որ զանգահարելու դեպքում իրենք «պատրաստ» գնան, նույնը Սլավիկ Կարապետյանին պատմել է նաև Սլավիկ Պողոսյանը՝ նշելով, որ պետք է պատրաստ լինեն ու հաջորդ օրը հանդիպեն ՀՀ Ազգային ժողովի մոտ: Աշոտիկ Կամավոսյանը հայտնել է նաև, որ իրավասու պաշտոնատար անձը ժամանակավոր պաշտոնակատար է, պետք է այլ անձ նրա փոխարեն նշանակվի, բայց Հովիկ Աղազարյանը պատրաստակամություն է հայտնել լուծել հարցը:

Մի քանի օր անց Սլավիկ Պողոսյանը Սլավիկ Կարապետյանին պատմել է, որ պայմանավորվել են 100.000 ԱՄՆ դոլարը տալ սկզբում, մյուս 100.000 ԱՄՆ դոլարը՝ գործարքները կատարելուց հետո, ընդ որում՝ այդ գումարի դիմաց ապահովվելու է անսահմանափակ քանակի գյուղատնտեսական կենդանիների արտահանումը, բացի այդ նշված գործընթացում առաջացած բոլոր խնդիրներում ևս ցուցաբերվելու է աջակցություն, սակայն Աշոտիկ Կամավոսյանը հանդիպմանը տարել է 20.000 ԱՄՆ դոլար, ինչը Հովիկ Աղազարյանը չի վերցրել՝ քիչ լինելու պատճառաբանությամբ:

Ստորև ներկայացվում են նշված խոսակցություններից հետաքրքրություն ներկայացնող որոշ հատվածներ.

Մասնավորապես.

Սլավիկ Կարապետյանը 2023 թվականի օգոստոսի 8-ին՝ ժամը 15:49-ին, զանգահարել է Սլավիկ Պողոսյանին, նրանց միջև, ի թիվս այլնի, տեղի է ունեցել հետևյալ խոսակցությունը.

«(...) **Սլավիկ Պողոսյան - Գնացինք ինքը Սևան էր, Աշոտը էլ բան չարեց, ես իրա հետ առանձին, Աշոտը մնաց էս կոմը, մենք առանձին ընդե բեսետկա կար նստանք խոսացինք, ինչ պետք էր ասեցի, ասեց վաղը 10-ի կողմերը կզանգեմ պատրաստ ըլնես, որ գաք:**

(...):

Սլավիկ Պողոսյան - Տենց էլի, էտի 99 տոկոսով տենցա լինելու, ասեց եթե ինչ-որ որը որ կասկածում եմ կասեմ կներես չեղավ, բայց ասեց ամեն դեպքում պատրաստ էղի (...)»:

Սլավիկ Կարապետյանը 2023 թվականի օգոստոսի 8-ին՝ ժամը 16:34-ին, զանգահարել է Սլավիկ Պողոսյանին, նրանց միջև, ի թիվս այլնի, տեղի է ունեցել հետևյալ խոսակցությունը.

«(...) Սլավիկ Կարապետյան - Բայց նորմալ կլնի չէ՞ էս պահերը:

Սլավիկ Պողոսյան - Ես համոզված եմ որ նորմալա, որովհետև ինքը բան չասեց էլի, որ ասենք կարա չեղնի կամ էս կամ էն:

(...) **Սլավիկ Պողոսյան - Ասեց Ֆսյո, օքեյ խնդիր չկա, իրան էլ ասի գլխանց բան կարվի էլի աբրանք-մաբրանքներից կբերվի կտա կծախի, հա ասեց ժամը 10-ի կողմերը առավոտ սպասի իմ զանգին հենց զանգեցի պատրաստ կգաս:**

Սլավիկ Կարապետյան - Բայց Աշոտին էլ չտանե՞ս հետդ:

Սլավիկ Պողոսյան- Բա էտա Աշոտի հետ եմ էթալու, հա, դե ինքը պիտի բան անի, դե սենց ընդե խոսալը պետք չէր, ինքը չէր ճանաչում իրա մոտը բայց դե սենց, ինչ ես առանձին խոսացի Աշոտին էլ ասել եմ, Աշոտը ասեց, ես ասի խնդիր չկա, չէ իրար հետ կեթանք, ընդե կլնենք էս հարցերը բան կանենք, ասեց ես էթում եմ խմելու արդեն: (...)»:

Սլավիկ Կարապետյանը 2023 թվականի օգոստոսի 9-ին՝ ժամը 12:31-ին, զանգահարել է Սլավիկ Պողոսյանին, նրանց միջև, ի թիվս այլնի, տեղի է ունեցել հետևյալ խոսակցությունը.

« **Սլավիկ Պողոսյան - Հիմա 2-ին պիտի լինեմ Ազգային ժողովի մոտ:**

Սլավիկ Կարապետյան - Հա:

Սլավիկ Պողոսյան - Ինքը ընդեղա էլի, իրան տենամ, բայց ասեց ընդեղ ասել են 1 օր - 2 օր համբերեք բան կանենք, հասկացա՞ր:

Սլավիկ Կարապետյան - Աշոտի հետ խի՞ չես էթում:

Սլավիկ Պողոսյան - Չգիտեմ, Աշոտի հետ էթամ, թե՝ պռոստը, Աշոտը ինձի ասեց դու գնա միատ իրան ասա միատ 3600 հատի համար դեմից թող մի հատ բան անեն, դե ես կռուպնի եմ ասե 100.000 եմ ասե էլի ընդե, միատ 3600 բան անեն դրանից հետո արդեն կանաչ լույսա էթալու ա: (...)»:

Սլավիկ Կարապետյանը 2023 թվականի օգոստոսի 10-ին՝ ժամը 13:55-ին, զանգահարել է Աշոտիկ Կամավոսյանին, նրանց միջև, ի թիվս այլնի, տեղի է ունեցել հետևյալ խոսակցությունը.

« (...) Սլավիկ Կարապետյան- Հա, դու խոսացի՞ր հետը:

Աշոտիկ Կամավոսյան - Հա պրյամոյ ես եմ խոսացել:

Սլավիկ Կարապետյան - Կարևորն էտա:

Աշոտիկ Կամավոսյան - Հա, խոսացի վոբշեմ բացատրի ասի ինչը ոնցա:

Սլավիկ Կարապետյան - Հա:

Աշոտիկ Կամավոսյան- Մոտս բան կար, բան արի, ասեց չէ, թող մնա կասեմ էսի, հիմա վաղը տենանք էլի պիտի-որ ըլնի:

Սլավիկ Կարապետյան - Դե առաջ աստված: (...)»:

1.2) ՀՀ հակակոռուպցիոն դատարանի թույլտվությամբ Սլավիկ Պողոսյանի նկատմամբ իրականացված «ներքին դիտում» օպերատիվ-հետախուզական միջոցառման արդյունքում 2023 թվականի օգոստոսի 28-ին Սլավիկ Կարապետյանի և Սլավիկ Պողոսյանի միջև, ի թիվս այլնի, տեղի է ունեցել հետևյալ խոսակցությունը.

« (...) **Սլավիկ Կարապետյան - Էն ի՞նչ էղավ Ձեր ու Աշոտի բռնած ոչխարների գործը:**

Սլավիկ Պողոսյան - Ախպեր նայի ասեմ, դեմից դու տենց ասիր սենց սենց:

Սլավիկ Կարապետյան - Հա չէ վերջը, ո՞ւր եք հասե:

Սլավիկ Պողոսյան - Նայի՝ Աշոտը դեմից հարց չկա ավտոները եթե պետքա կդնենք կբերենք փողը կտանք էտ մարդուն, լսա ասեց 300 պլյուս 100, 400.000 փող ենք տալիս, ուրեմն Սլավ ջան գնացինք հասանք Սևան տեսանք, էտ նույն բանը ես իրան ասեցի, ասեց էգուց իջնում եմ քաղաք, էկել խոսացել էր, գնացինք էտ մարդուն տեսանք, էտ մարդը ինձի ասեց ախպեր ջան ինձի 400.000 պետք չի ու պրիտոմ 100.000-ի համար, ասեց կտաք 200.000՝ էն 100.000-ը հետո, 100.000-ը հեչ, էն, որ ասում էի 200.000-ը գլխից ասում էր 200.000 էլ գլխից պետք չի, լսո՞ւմ ես, ասեց 100.000 բան կանեք, այսինքն էն, ինչը Աշոտը ինձի ասում էր խնդիր չկա, ախպեր էտ մարդն էլ ընդեղ պայմանավորվել էր, հետո էկանք 20.000-ով գնացինք էտ մարդը ասեց Սլավ ջան ես էտ մարդկանց բան եմ ասել, (...):

Սլավիկ Կարապետյան - Հա հա:

Սլավիկ Պողոսյան – (...) չգիտեմ քյասար ումա ասե ինչ, քյասար ասեց 100.000 բերում տալիս եք գնացեք ինչքան ուզում էք տարեք, ոչ թե 100.000 գլխի համարա էտ փողը, այլ՝ միլիոն գլուխ, ինչքան ուզում եք տարեք անսահմանափակ, եթե խնդիր էլ կունենաք մենք լուբոյ հարցով տեր ենք, հետո Աշոտը, որ 20.000 վերցրեց գնացինք, ասեց ախպեր ասել էիք 100, հիմա էկել եք, ասում եք 20, ես հիմա ի՞նչ եթամ ասեմ էտ մարդուն:

Սլավիկ Կարապետյան - Հիմա ի՞նչ վիճակա:

(...):

Սլավիկ Պողոսյան - Ախպեր ըտենց ես բան չեմ արել, էն օրը իրան տեսա, մի քանի օր առաջ գնացի Ազգային ժողով, էկա, էն դեմի այգին հանդիպանք բան, ասեց Սլավ նամանավանդ էտ բանը եքա շուխուռա ասեց, չե՞ս լսել:

Սլավիկ Կարապետյան- Չէ:

(...):

Սլավիկ Պողոսյան- Որ փող են տալիս բան են անում էտ ինչա, կառանտինի թուղթ են վերցնում: (...)»:

1.3) ՀՀ հակակոռուպցիոն դատարանի՝ 2024 թվականի նոյեմբերի 26-ի ՀԿԴ/0081/10/24 որոշման հիման վրա կապի օպերատորներից ստացվել և զննվել են Հովիկ Աղազարյանի, Սլավիկ Պողոսյանի և Աշոտիկ Կամավոսյանի կողմից օգտագործված բջջային հեռախոսահամարների՝ 2023 թվականի օգոստոսի 1-ից մինչև նույն թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի մուտքային և ելքային զանգերի հաղորդագրությունների վերծանումները, հեռախոսային հաղորդակցությունն սկսելու և ավարտելու ժամանակի, հեռախոսային հաղորդակցությունն սկսելու պահին և դրա ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և տեղաշարժը պարզելու համար անհրաժեշտ տվյալները:

Զննությամբ պարզվել է, որ 2023 թվականի օգոստոսի 8-ին՝ ժամը 13:18:56-ին Հովիկ Աղազարյանի հեռախոսազանգը սպասարկվել է Սևան քաղաքում տեղակայված ալեհավաք կայանով, նույն օրը Սևան քաղաքում տեղակայված ալեհավաք կայանով է սպասարկվել նաև Սլավիկ Պողոսյանի հեռախոսազանգը: Նույն օրը՝ ժամը 13:35:28-ին, 13:39:37-ին և 13:44:13-ին և՛ Հովիկ Աղազարյանի, և՛ Սլավիկ Պողոսյանի հեռախոսազանգերը սպասարկվել են Սևան քաղաքում տեղակայված նույն ալեհավաքով:

Բացի այդ, պարզվել է, որ Աշոտիկ Կամավոսյանի բջջային հեռախոսահամարը 2023 թվականի օգոստոսի 8-ին՝ ժամը 13:19:41-ից մինչև ժամը 14:01:50-ը երեք անգամ սպասարկվել է Սևան քաղաքում տեղակայված ալեհավաք կայաններով, ընդ որում՝ վերը նշված զանգերի ժամանակագրությունը համընկել է Սլավիկ Պողոսյանի բջջային հեռախոսահամարի՝ Սևան քաղաքում տեղակայված ալեհավաք կայանների կողմից սպասարկված զանգերի ժամանակագրության հետ:

Բացի այդ, պարզվել է, որ 2023 թվականի օգոստոսի 9-ին, այսինքն՝ ՀՀ Ազգային ժողովի հարևանությամբ գտնվող այգում Հովիկ Աղազարյանի և Սլավիկ Պողոսյանի հանդիպման օրը՝ ժամը 09:28:35-ին, առաջինը Հովիկ Աղազարյանն է իր բջջային հեռախոսահամարից զանգահարել Սլավիկ Պողոսյանին: Ընդ որում, Հովիկ Աղազարյանի բջջային հեռախոսահամարի զանգը սպասարկվել է Բաղրամյան պողոտայում տեղակայված ալեհավաք կայանի կողմից, իսկ Սլավիկ Պողոսյանի հեռախոսահամարին նշված մուտքային զանգն սպասարկվել է Արմավիրի մարզի Դալարիկ գյուղում տեղակայված ալեհավաք կայանի կողմից:

Հովիկ Աղազարյանի հեռախոսահամարից նույն օրը Սլավիկ Պողոսյանի հեռախոսահամարին ժամը 12:15:20-ին և 14:53:55-ին կատարվել է ևս երկու ելքային հեռախոսազանգ:

Նույն օրը Սլավիկ Պողոսյանի կողմից ժամը 14:09:58-ին և 14:11:09 կատարված երկու ելքային զանգերը արդեն սպասարկվել են Երևան քաղաքի Բաղրամյան պողոտա 40 հասցեում տեղակայված ալեհավաք կայանով և հատկանշական է, որ ժամը 14:11:09-ին ելքային զանգ է կատարվել հենց Հովիկ Աղազարյանի բջջային հեռախոսահամարին:

Համադրության նպատակով պետք է նշել, որ ժամը 13:45:01-ից մինչև ժամը 14:08:49-ն ընկած ժամանակահատվածում, Հովիկ Աղազարյանի բջջային հեռախոսահամարին կատարված մուտքային 5 զանգերն սպասարկվել են Երևան քաղաքի Բաղրամյան պողոտա 19 հասցեում տեղակայված ալեհավաք կայանով, իսկ ժամը 14:43:27-ին կատարված զանգն սպասարկվել է Երևան քաղաքի Բաղրամյան պողոտա 40 հասցեում տեղակայված ալեհավաք կայանով, ժամը 14:45:55-ի մուտքային զանգը նույնպես սպասարկվել է Երևան քաղաքի Բաղրամյան պողոտա 19 հասցեում տեղակայված ալեհավաք կայանով, իսկ ժամը 14:46:48-ի զանգը՝ կրկին Երևան քաղաքի Բաղրամյան պողոտա 40 հասցեում տեղակայված ալեհավաք կայանով:

2023 թվականի օգոստոսի 10-ին Սլավիկ Պողոսյանի, Աշոտիկ Կամավոսյանի և Հովիկ Աղազարյանի հեռախոսահամարները հետաքրքրություն ներկայացնող ժամանակահատվածներում սպասարկվել են Երևան քաղաքի Բաղրամյան պողոտա 40 հասցեում տեղակայված ալեհավաք կայանով:

1.4) Հովիկ Աղազարյանի կողմից օգտագործված բջջային հեռախոսահամարի՝ 2023 թվականի օգոստոսի 1-ից մինչև նույն թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի մուտքային և ելքային զանգերի (այդ թվում՝ զրոյական) հաղորդագրությունների վերծանումների, հեռախոսային հաղորդակցությունն սկսելու և ավարտելու ժամանակի, հեռախոսային հաղորդակցությունն սկսելու պահին և դրա ընթացքում հաղորդակցվողների գտնվելու վայրը և նրա տեղաշարժը պարզելու համար անհրաժեշտ տվյալների զննությամբ պարզվել է նաև, որ **2023 թվականի օգոստոսի 8-ին՝ ժամը 17:22-րդ րոպեին, այսինքն՝ Սևան քաղաքում տեղի ունեցած հանդիպումից հետո, Հովիկ Աղազարյանը զանգահարել է ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի իրավասու պաշտոնատար անձին և նրա հետ ունեցել 1 րոպե 57 վայրկյան տևողությամբ հեռախոսազրույց:**

2023 թվականի օգոստոսի 9-ին՝ ժամը 08:02-ին և 10:47-ին Հովիկ Աղազարյանը նույն անձից ստացել է երկու մուտքային հեռախոսազանգ: Առաջին զանգի դեպքում հեռախոսազրույցը կազմել է 40 վայրկյան, իսկ երկրորդ զանգի դեպքում՝ 44 վայրկյան:

Նույն օրը՝ ժամը 11:07-ին, Հովիկ Աղազարյանը կրկին զանգահարել է նշված պաշտոնատար անձին: Հեռախոսազրույցը տևել է 13 վայրկյան: Նույն օրը՝ ժամը

11:22-րդ րոպեին, Հովիկ Աղազարյանը նույն անձից կրկին ստացել է մուտքային հեռախոսազանգ, իսկ զրույցի տևողությունը կազմել է 42 վայրկյան:

1.5) Նախաքննության ընթացքում Աշոտիկ Կամավոսյանն, ի թիվս այլնի, ցուցմունք է տվել այն մասին, որ 2023 թվականի օգոստոսի 8-ին Սլավիկ Պողոսյանի հետ Գեղարքունիքի մարզի Սևան քաղաքի դիմացի հատվածում գտնվող հանգստյան գոտիներից մեկում հանդիպել են ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովիկ Աղազարյանի հետ, ում հետ ինքը ծանոթացել է Սլավիկ Պողոսյանի միջոցով: Հովիկ Աղազարյանի հետ զրույցի ընթացքում Սլավիկ Պողոսյանը և ինքը հայտնել են, որ ցանկանում են առանց կարանտինացման մոտ 150.000-200.000 գլուխ ոչխար արտահանել և այդ գործով զբաղվելու հնարավորություն ունենան միայն իրենք, քանի որ հակառակ դեպքում օգուտ չի լինի: Հովիկ Աղազարյանը նշված հարցերը լուծելու համար պահանջել է 200.000-300.000 ԱՄՆ դոլար: Ինքը ասել է, որ այդքան գումար միանգամից չի կարող տալ, ընդհանուր առմամբ, պահանջին համաձայնել է՝ գումարը մաս-մաս տալու պայմանով, սակայն Հովիկ Աղազարյանը ասել է, որ 200.000 ԱՄՆ դոլարից պետք է սկզբում տալ 100.000 ԱՄՆ դոլար, իսկ մնացած 100.000 ԱՄՆ դոլարը՝ ընթացքում: Հաջորդ օրը՝ ժամը 12:00-ի սահմաններում, ըստ պայմանավորվածության Հովիկ Աղազարյանի հետ հանդիպել են ՀՀ Ազգային ժողովի մոտ գտնվող այգում: Հանդիպման գնացել է իր մոտ ունենալով 20.000 ԱՄՆ դոլար, քանի որ չի կարողացել Հովիկ Աղազարյանի պահանջած սկզբնական 100.000 ԱՄՆ դոլար գումարը հայթայթել: Հովիկ Աղազարյանին առաջարկել են սկսել արտահանման գործընթացը, սակայն վերջինս տեղեկանալով առկա գումարի չափի մասին հրաժարվել է վերցնել այն՝ նշելով, որ ինքը որոշ պաշտոնատար անձանց հետ ունի պայմանավորվածություններ, ուստի 20.000 ԱՄՆ դոլարի դեպքում գործը չի լինի: Դրանից հետո իրենց խոսակցությունն ավարտվել է և այլևս այդ հարցով Հովիկ Աղազարյանին չեն դիմել:

1.6) Սլավիկ Պողոսյանն, ի թիվս այլնի, ցուցմունք է տվել այն մասին, որ 2023 թվականի ամռանն իրեն դիմել է Աշոտիկ Կամավոսյանը և հայտնել, որ Արաբական Միացյալ Էմիրություններում կան մարդիկ, ովքեր ցանկանում են առանց 21 օր կարանտինացնելու արտահանել ոչխարներ և գառներ, ուստի խնդրել է այդ հարցով զրուցել Հովիկ Աղազարյանի հետ: Աշոտիկ Կամավոսյանն իրեն ասել է, որ խոսքը գնում է մոտ 500.000 գլուխ ոչխար արտահանելու մասին և կարող է դրա դիմաց 200.000-300.000 ԱՄՆ դոլար գումար տալ: Նկատի ունենալով, որ Հովիկ Աղազարյանին ճանաչել է վաղուց, ուստի հեռախոսազանգի միջոցով վերջինիս հետ պայմանավորվել և հանդիպել է Սևան քաղաքում, որին ներկա է եղել նաև Աշոտիկ Կամավոսյանը, սակայն ինքը Հովիկ Աղազարյանի հետ զրուցել է առանձին: Աշոտիկ Կամավոսյանի առաջարկի,

մասնավորապես՝ ոչխարները կարանտին չանցնելու և դրա դիմաց 200.000-300.000 ԱՄՆ դոլար տալու մտադրության մասին հայտնել է Հովիկ Աղազարյանին, ով նշել է, որ կմտածի առաջարկի մասին և կհայտնի: Դրանից հետո՝ 1-2 օր անց, նորից հեռախոսազանգի միջոցով Հովիկ Աղազարյանի հետ ձեռք բերած պայմանավորվածության համաձայն ինքը, Աշոտիկ Կամավոսյանը և Հովիկ Աղազարյանը հանդիպել են ՀՀ Ազգային ժողովի մոտ գտնվող այգում: Զրույցին մասնակցել է նաև Աշոտիկ Կամավոսյանը: Այդ հանդիպման ժամանակ Հովիկ Աղազարյանը նշված գործը կազմակերպելու համար սկզբից պահանջել է 100.000 ԱՄՆ դոլար, իսկ մնացած գումարը՝ հետագայում տալու պայմանով: Շուրջ 1-2 օր անց կրկին Հովիկ Աղազարյանի հետ պայմանավորվածության համաձայն, ինքը, Աշոտիկ Կամավոսյանը և Հովիկ Աղազարյանը հանդիպել են ՀՀ Ազգային ժողովի մոտ գտնվող այգում, որի ժամանակ Աշոտիկ Կամավոսյանը Հովիկ Աղազարյանին հայտնել է, որ կարողացել են հայթայթել ընդամենը 20.000 ԱՄՆ դոլար գումար: Լսելով դա՝ Հովիկ Աղազարյանն ասել է, որ նշված չափի գումարի դեպքում գործարքը չի կարող տեղի ունենալ: Դրանից հետո ինքն այդ հարցով այլևս չի զբաղվել:

Լրացուցիչ հարցաքննության ընթացքում Սլավիկ Պողոսյանը նշել է, որ չի հիշում, թե քանի գլուխ ոչխարի արտահանման մասին է խոսքը գնացել, սակայն Հովիկ Աղազարյանը հայտնել է, որ պահանջված չափի գումարը ստանալու դեպքում կկարողանան արտահանել առանց քանակային սահմանափակման: Հավելել է, որ ՀՀ Ազգային ժողովի մոտ տեղի ունեցած հանդիպումների ժամանակ Հովիկ Աղազարյանը նշել է, որ արդեն պայմանավորվածություններ ունի անձանց հետ, սակայն թե կոնկրետ ում հետ՝ չի հիշում:

Նշել է նաև, որ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում հարցաքննվելուց հետո Հովիկ Աղազարյանը Սիմոն Պետրոսյանի միջոցով իր որդուն՝ Դավիթին, հրավիրել է հանդիպման և պարզաբանումներ պահանջել իր դեմ ցուցմունք տալու վերաբերյալ:

1.8) Նույնաբովանդակ ցուցմունք է տվել նաև Սլավիկ Պողոսյանի որդին՝ Դավիթ Պողոսյանը:

1.9) Սիմոն Պետրոսյանը ցուցմունք է տվել այն մասին, որ չի հիշում՝ հանդիպումը կազմակերպել է Դավիթ Պողոսյանի, թե՝ Հովիկ Աղազարյանի նախաձեռնությամբ:

1.10) Դեպքի վերաբերյալ հարցաքննվել է նաև Հովիկ Աղազարյանը, ով հայտնել է, որ Սևան քաղաքում հանդիպման ժամանակ Սլավիկ Պողոսյանն իրեն ասել է, որ ընկերը ցանկանում է մեծ քանակությամբ ոչխարներ, գառներ արտահանել արաբական երկրներ, և բյուրոկրատական քաշքշուկներից խուսափելու նպատակով խնդրել է օգնել:

Այդ ժամանակ ինքը գինովցած է եղել և չի հիշել, թե Սլավիկ Պողոսյանը մենակ է եղել, թե՝ ոչ: Սլավիկ Պողոսյանի առաջարկն իրեն դուր չի եկել, սակայն նրան չվիրավորելու համար ասել է, որ այդ հարցով կզբաղվի: Դրանից հետո, իր հիշելով՝ հաջորդ օրը կամ դրա մյուս օրը կրկին Սլավիկ Պողոսյանի հետ պայմանավորվել և հանդիպել են ՀՀ Ազգային ժողովի այգում, որտեղ Սլավիկի հետ եկել է նաև ոչխար արտահանողը՝ Աշոտը: Առանց սննդամթերքի անվտանգության վարչության աշխատակիցների հետ զրուցելու՝ մտածելով, որ Սլավիկի առաջարկած եղանակով՝ առանց կարանտինի ոչխարների արտահանումն անօրինական է, Սլավիկ Պողոսյանին և Աշոտին հայտնել է, որ իբր խոսել է սննդամթերքի անվտանգության վարչության աշխատակիցների հետ, ուսումնասիրել է օրենքները, ոչխարների արտահանումը պետք է լինի բացառապես օրենքի սահմաններում և որևէ բանով չի կարող օգտակար լինել: Միաժամանակ, նշել է, որ Սլավիկ Պողոսյանը և Աշոտն իրեն հայտնել են, որ յուրաքանչյուր գլխի արտահանումից իրենք, այսինքն՝ Աշոտը և նրա օտարերկրացի գործընկերը ունենալու են 3 ԱՄՆ դոլար շահույթ:

Հերքել է 150.000-200.000 գլուխ ոչխարների արտահանումն առանց խոչընդոտների, կարանտինի շրջանցմամբ կազմակերպելու համար 200.000-ից 300.000 ԱՄՆ դոլար պահանջելու և Աշոտիկ Կամավոսյանի կողմից 20.000 ԱՄՆ դոլար տալու պատրաստակամություն հայտնելու մասին խոսակցությունները և նշել, որ ինքը գումար չի պահանջել, իրեն գումարի առաջարկ չի եղել:

Հատկանշական է, որ, թեև Հովիկ Աղազարյանը հերքել է իր կողմից ՀՀ սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի իրավասու պաշտոնատար անձի հետ հիշյալ հարցի կապակցությամբ որևէ զրույց կամ պայմանավորվածություն ունենալու հանգամանքը, այնուամենայնիվ քրեական վարույթով ձեռք են բերվել տվյալներ այն մասին, որ Սևան քաղաքում տեղի ունեցած հանդիպումից հետո, Հովիկ Աղազարյանը զանգահարել է նշված ծառայությունում պաշտոն զբաղեցնող անձին և ունեցել 1 րոպե 57 վայրկյան տևողությամբ հեռախոսազրույց:

Ավելին՝ հիշյալ պաշտոնատար անձի հետ հեռախոսազրույցները Հովիկ Աղազարյանն ունեցել է նաև 2023 թվականի օգոստոսի 9-ին, ինչը վկայում է Հովիկ Աղազարյանի կողմից տրված ցուցմունքների ոչ արժանահավատ լինելու մասին:

1.11) Սլավիկ Պողոսյանի և Հովիկ Աղազարյանի միջև կատարված առերես հարցաքննության ընթացքում Սլավիկ Պողոսյանը պնդել է, որ իր հետ առերեսվողի մոտ գնացել են Աշոտիկ Կամավոսյանի հետ, հայտնել են, որ ցանկանում են առանց կարանտինացնելու արտահանել մեծ քանակության ոչխարներ, որի համար պատրաստ են 200.000 - 300.000 ԱՄՆ դոլար գումար տալ, իսկ Հովիկ Աղազարյանը նախ պահանջել է 100.000 ԱՄՆ դոլար այդ գործընթացը կարգավորելու համար, սակայն երբ

Աշոտիկ Կամավոսյանը հայտնել է, որ սկզբի համար կարող է տալ միայն 20.000 ԱՄՆ դոլար՝ Հովիկ Աղազարյանը հրաժարվել է կատարել պայմանավորվածությունը:

Լսելով առերես հարցաքննվողի ցուցմունքը՝ Հովիկ Աղազարյանը հերքել է այն:

1.12) Աշոտիկ Կամավոսյանի և Հովիկ Աղազարյանի միջև կատարված առերես հարցաքննության ընթացքում Աշոտիկ Կամավոսյանը պնդել է, որ սկզբից Սևան քաղաքում, այնուհետև՝ ՀՀ Ազգային ժողովի մոտ գտնվող այգում հանդիպել է իր հետ առերեսվողին, զրուցել են առանց կարանտինացնելու ոչխարների արտահանման հարցով, որի համար կա՛մ իրենք, կա՛մ իր հետ առերեսվողը պահանջել է յուրաքանչյուր գլուխ գառի համար 3 ԱՄՆ դոլար գումար, մոտ՝ 200.000-300.000 ԱՄՆ դոլար, սակայն, քանի որ գումարը չեն ունեցել, այլևս գործարքը տեղի չի ունեցել:

Հովիկ Աղազարյանն իր հերթին հայտնել է, որ իր հետ առերեսվողի հետ երբևէ չի հանդիպել և նման թեմայով չի զրուցել, ինքը հանդիպել է Սլավիկ Պողոսյանի և մեկ այլ՝ Աշոտ անունով անձի հետ, ով, սակայն չի հանդիսացել իր հետ առերես հարցաքննվողը, խոսք է գնացել այն մասին, որ ամեն գլուխ կենդանու համար նրանց ընկերությունը պետք է 3 ԱՄՆ դոլար եկամուտ ստանար, սակայն 200.000-300.000 ԱՄՆ դոլարի մասին խոսք չի եղել:

Հովիկ Աղազարյանի ցուցմունքներն անարժանահավատ լինելու մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ, թեև վերջինս պնդել է, որ Աշոտիկ Կամավոսյանի հետ երբևէ չի հանդիպել, այնուամենայնիվ վերջինիս հանդիպումը Հովիկ Աղազարյանի հետ հիմնավորվել է ոչ միայն Աշոտիկ Կամավոսյանի և Սլավիկ Պողոսյանի ցուցմունքներով, այլ նաև այն հանգամանքով, որ Աշոտիկ Կամավոսյանի բջջային հեռախոսահամարը քննությանը հետաքրքրություն ներկայացնող օրերին սպասարկվել է Սլավիկ Պողոսյանի և Հովիկ Աղազարյանի բջջային հեռախոսահամարները սպասարկված ալեհավաք կայաններով:

2. Առանձնապես խոշոր չափերով կաշառք ստանալու դրվագով կատարված նախաքննությամբ պարզվել է, որ «Էկո սիթի Ա.Ռ.» ՍՊ ընկերության հիմնադիր-նախագահ Արամ Մկրտչյանը ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Հովիկ Աղազարյանին խնդրել է իր լիազորությունների շրջանակում միջոցներ ձեռնարկել Երևան քաղաքի Աջափնյակ թաղամասի Էստոնական փողոցի 8-րդ հասցեում գտնվող «Հենրի Մորգենթաուի անվան թիվ 136 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի վթարային վիճակում գտնվող շենքը քանդելու, այդ հողատարածքի մի մասի վրա դպրոցի նոր շենք կառուցելու, իսկ մյուս մասը՝ պետության կողմից «Էկո սիթի Ա.Ռ.» ՍՊ ընկերությանն

անհատույց տրամադրելու և դրա վրա բազմաբնակարան բնակելի շենք կառուցելու թույլտվություն ստանալու համար:

Այդ գործընթացը կազմակերպելու նպատակով Արամ Մկրտչյանը 2021 թվականին մաս-մաս, ընդհանուր՝ 23.000 ԱՄՆ դոլար և 300.000 ՀՀ դրամ է տվել ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Հովիկ Աղազարյանին:

Ստանալով նշված գումարը՝ Հովիկ Աղազարյանը ձեռնամուխ է եղել նշված գործընթացի կազմակերպմանը: Այդ նպատակով Հովիկ Աղազարյանը 2023 թվականի հունիսի 7-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանին է հասցեագրել թիվ 054/3117-2023 գրությունը, որով ներկայացրել է «Էկո սիթի Ա.Ռ.» ՍՊ ընկերության հիմնադիր-նախագահ Արամ Մկրտչյանի կողմից իրեն ներկայացված առաջարկը, ինչին ի պատասխան՝ գրությամբ ներկայացվել են դպրոցի շենքի տեխնիկական վիճակի եզրակացության, բազմաբնակարան բնակելի շենքի և նոր դպրոցի կառուցման էսքիզային նախագծի վերաբերյալ գերատեսչության դիտարկումները:

Չնայած խոստմանը՝ Հովիկ Աղազարյանը չի կարողացել կազմակերպել իրավասու պետական մարմիններից համապատասխան թույլտվություններ ստանալու գործընթացը, միաժամանակ՝ հրաժարվել է վերադարձնել Արամ Մկրտչյանի կողմից տրված գումարը:

Դրանից հետո, Արամ Մկրտչյանն իր քույր Ռուզաննա Մկրտչյանի ընկերուհի Գոհար Սարգսյանի միջոցով ծանոթացել է Հայկ Նազարյանի հետ և նրան խնդրել է միջոցներ ձեռնարկել, որպեսզի Հովիկ Աղազարյանն իրեն վերադարձնի վերցրած գումարը:

Այսպիսով՝ Հովիկ Աղազարյանը լինելով ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր՝ օրենսդիր իշխանության ոլորտում իրականացնելով իշխանական լիազորություններ, այդկերպ՝ հանդիսանալով պաշտոնատար անձ, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ իրավունք ունենալով հարցումներով և առաջարկներով դիմելու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ ու պաշտոնատար անձանց, կաշառք տվողի օգտին իր իշխանական լիազորությունները և դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով գործողություն կատարելու դիմաց պահանջել և անձամբ ստացել է առանձնապես խոշոր չափերով կաշառք:

Վերոգրյալը հիմնավորվել է ստորև թվարկված ապացույցներով.

2.1) ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարևոր գործերի քննության գլխավոր վարչության խոշտանգումների և պաշտոնատար անձանց կողմից բռնություն

գործադրելով լիազորությունները չարաշահելու կամ անցնելու հանցագործությունների քննության վարչության հատկապես կարևոր գործերով քննիչի հաղորդմանը կից ստացված լազերային սկավառակի զննությամբ պարզվել է հետևյալը.

«VID-20240120-WA0001» անվանումով 2 րոպե 13 վայրկյան տևողությամբ տեսաձայնագրությունում երևում է ճերմակ մազերով, շուրջ 50-55 տարեկան տղամարդ, (ըստ ստացված տվյալների՝ Արամ Մկրտչյան) ով հայտնում է հետևյալը.

«Հայկ ջան, փոքր-փոքր ֆայլերով պետք ա ուղարկեմ, որովհետև մի քիչ երկար եմ խոսում ծանրաբեռնվումա, չի գալիս, էսի ծանր ֆայլա, դրա համար էս փորձնական ուղարկեցի, տեսա, որ փոքրով գալիսա: Հիմա տես, Հայկ ջան, օրինական ընթացք տալուն էտքան էլ կողմնակից չեմ, կարամ ասեմ ինչի համար, որովհետև սա հերթական անգամ ժամանակ ձգելու ինչ-որ մի բանա, որ երկարացվի ժամանակը, ժամանակ ձգվի, ինձ ոչ ոք չի սպասի ու ոչ էլ չի սպասում: Էտ ծայրահեղ քայլին գնալու պատճառը հենց դայա: Ես արդեն իրան սպասում եմ, չգիտեմ անցած տարվա ամառվանից, բայց մինչև էտ էլ ինքը գիտեր, որ էտ գործերը ինքը չի անելու, այսինքն՝ խաբելա, փողերը վերցրելա, գործերն էլ՝ մեկա չի լինելու: Ձգում էր, ժամանակ էր ձգձգում, մի քիչ էլ ձգի, մի քիչ էլ ձգի, օրենքի սահմաններում մի հատ քոչոտ թուղթ, որը որ ոչ մի բան չի ասում, ոչ մի բան չի ասում, ասումա օրենքի սահմաններումա, նորմալա, հա ուրեմն նորմալա, եթե բնականաբար օրենքի սահմաններում չլիներ, ինչի էինք էտի անում, այսինքն՝ եթե ես էլ գրեի էտ գրությունը, նույնատիպ պատասխան էին տալու: Բայց էտ չեմ խորանում էտ ամենի մեջ, օրինական ճանապարհ ինքը չգիտեմ գնացելա հաղորդումա տվել, նախևառաջ կամ կա կամ չկա, կամ եթե վերցրել են, էտ ինչի հիման վրա են վերցրել, այսինքն՝ ինքը գնացելա ինչ հաղորդումա տվել, որ ինչ-որ մի կին, ինչ-որ մի տղամարդու ասել ա, որ ինքը ինչ-որ 23.000 դոլար փողա տվել, կամ վերցրել, սկի ճիշտն էլ չի ասել, տվելա թե վերցրել, էսի ինչ գժանոցա, թազա քցելու ձևա, հա էլի, այ սենց խճճում, խճճում, խճճում, ու վերջում ինչ-որ մի բանի դուրս գալու համար: Ինձ թվումա ժամանակ ձգելու համարա, հլը էս մեկը փորձեմ ուղարկեմ:»:

«VID-20240120-WA0002» անվանումով 4 րոպե 25 վայրկյան տևողությամբ տեսաձայնագրությունում նույն տղամարդը տեղեկություններ է հայտնում այն մասին, որ.

«Հիմա ուղարկեցի շարունակությունը, եթե ուզում ես ինչ-որ օֆիցիալ որպես բողոք ներկայացվի, խնդրեմ՝ էս տեսաձայնագրությունը օֆիցիալ բողոք կարող ես ընդունել: Նորից եմ կրկնում, ես պատգամավոր Աղազարյան Հովիկին տվել եմ գումար, մաս-մաս, տվել եմ բավականին խոշոր գումար, ընդհանուրը եղելա 23.000 դոլար և 300.000 դրամից մի քիչ ավել գումար, հա, որից 8.000-ը էն մարդուն, ինչ-որ մի մարդուց ումից, որ ես վերցրել եմ պարտք եմ, գնացելա վիզա վերցրել, ինչ որ մի թուղթա տվել, որ ինչ-

որ մի ժամանակի ընթացքում կտա: Էտ էլ արելա ասեմ ինչի համար, որովհետև էտ մարդու հետ ինքը ծանոթա, ծանոթա եղել, ես եմ իրանց ծանոթացրել, իրանք իրանք ճանաչել են: Էս մյուս պարագայում ինքը էտ մարդուն չի ճանաչում, այսինքն՝ էտ մարդկանց չի ճանաչում, հա, փողը վերցրել եմ ես, տվել եմ իրան: Հիմա ես ասում եմ իրան՝ փող ես քեզ տվել եմ թե չէ, ասումա տվել ես, ինձ հետ տալու ես էտ փողը, ասումա՝ չէ, մի պարագայում ասումա, եթե տամ էլ, տալու եմ ամառը, հիմա չեմ կարա տամ, 21 թվականին եմ տվել էտ փողը, մյուս պարագայում, ասումա՝ ում ես դու պարտք տալու, ում ես պարտք, էտ մարդկանց հետ ես խոսամ, ժամանակ կխոսամ, ժամանակ կվերցնեմ, էտ ժամանակ կտամ: Գիտես ինչ կա, ես իրան էտ ժամանակ երբ որ արդեն թեժանում էր էտ խոսակցությունը, հիմա ասել եմ արի կլնի դու վերցրա էտ պարտավորվածությունը քո վրա, արի կլնի դու խոսա էտ մարդկանց հետ, չգիտեմ ժամկետ խոսա, էս արա, էն արա, որովհետև ինչ-որ ժամկետներ ենք խոսում, ժամկետներ ենք ասում, հետո էտ ժամկետները լրանումա ոչ մի բան չի արվում, ստախոսը դառնում եմ ես: Դու էտ ճանապարհով, հա, շատ խելացի, մտածեցիր, պլանավորեցիր, պարոն Աղազարյան, սարքեցիր ինձ բոլորի մոտ ստախոս, դու դուրս եկար ճշմարտախոս, իբրև թե չակերտավոր իհարկե, ու էս ամեն ինչը սարքեցիր իմ գլխին, հիմա էլ էսի կոնկրետ, կոնկրետ ռեկետա, կոնկրետ քցոցիյա, կոնկրետ խարդախությունա, անձամբ իմ հանդեպ, փողը վերցրել ես, չես տալիս: Ինչա նշանակում՝ փողը վերցրել եմ Արամից, բայց Արամին էտ փողը հետ չեմ տա, կտամ, չգիտեմ, ուրիշ մարդու, ումը որ ինքը պարտքա, կամ իրան էլ հենց հիմա չեմ կարա տամ, կամ կարամ տամ չգիտեմ էսինչ ժամանակահատվածում: Էն սկզբից ասում էիր՝ տունս կծախեմ կտամ, տունդ հանել էիր վաճառքի, ձեն չէինք հանում, ես ձեն չէի հանում, ասում էի՝ մարդն իրա տուննա հանել վաճառքի, որ էտ խնդիրները լուծի, էսա էնա: Ես չունեմ ոչ մի բան, ասում եմ՝ մի հատ մեքենա ունեի, վարձով տնից էլ եմ դուրս եկել, որովհետև վարձը չէի կարողանում վճարել, իսկ դու բնականաբար վարձով տնից գնացիր տուն առար, ես հասկանում եմ ու հաստատ վստահ եմ, որ էտ ոչ միայն ինձանից վերցված փողերով էս առել, այլ ուրիշ մարդկանց հետ ուրիշ գործարքներ էլ ես ունեցել, լավ ես արել, ինչ էլ որ արել ես, ուրիշ մարդկանց հետ, ես խնդիր չեմ տեսնում, իմ հետ վատ ես արել, էտ վատն էլ ենք դնում մի կողմ, ես շատ-շատ եմ տուժել էտ քո արարքի շնորհիվ, որովհետև խոսում էիր ինչ որ մի ժամկետ, էտ ժամկետի մեջ էտ խնդիրները չէիր կարողանում լուծել, կամ ընդհանրապես չէիր կարողանում լուծել, կամ հետո մտածում էիր, որ էտ խնդիրը առավել արժի, քան որ ես քեզ տվել եմ, դրա չգիտեմ հարյուրապատիկն արժի, սկսում ես, չգիտեմ, ինչեր խոսալ, չնայած ասում եմ՝ ես եթե օֆիցիալնի հաղորդագրություն տամ, պաձետալնի փաստաթղթերով, ապացույցներով, դնելու եմ սաղ այ սենց էլի տեսաձայնագրություն անեմ, որտեղ որ քո տված փաստաթղթերը, որտեղ որ ցույց տամ **քեզ ուղարկված գրությունները, քո միջնորդությունը, ու ապացուցեմ, թե ինչի համար**

ես վերցրել էտ գումարները: ՈՒ էտ գործն էլ չի եղել: Չլնելուց հետո, քո խոսքնա՝ ներողություն կխնդրենք, հետ կտանք: Ես քեզ էտքան գումար եմ տվել, դու էսօր հազար դրամ ինձ հետ տվել ես, չէ, բա լավ քո մարդկային խիղճդ որնա, դու անընդհատ ինչ-որ սադրանքների ես գնում, մի րոպե կներեք:»:

«VID-20240120-WA0003» անվանումով 4 րոպե 27 վայրկյան տևողությամբ տեսաձայնագրությունում նույն տղամարդը տեղեկություններ է հայտնում այն մասին, որ.

«Հա, երբ որ զապիսը երկարա լինում չի քաշում, դրա համար եմ ինձ կտոր կտոր անում: Հիմա տեսեք, անընդհատ ինչ-որ սադրանքներ էս անում, մարդկանց հետ խոսալուց խոսում էս շատ անշնորք ձևի, դրա ապացույցներն էլ կա, դրանք զապիս էմ արել: Դու խոսացել էս, ես ինձ թույլ չեմ տվել, ասենք հայհոյանք բան թույլ չեմ տվել, հայհոյանքները դու էս տվել, հայհոյանքները դու էս տվել: Ես ոչ մեկի ոչ հայհոյել եմ, ոչ բան եմ արել, ես ընդամենը քեզանից միշտ ուզել եմ իմ տված փողը, թեկուզ մաս-մաս: Նորից եմ կրկնում ես քեզ մաս-մաս եմ տվել, միանգամից չեմ տվել, մաս-մաս թեկուզ ինչ որ չափերով դու էլ ինձ հետ տաս: Հիմա, դու սկսում էս այլանդակ հայհոյանքներ տալ, մարդու հետ խոսալուց, ասենք մեկն իմ հետ խոսալուց կարաս մատներդ կոխես աչքերս, ձեռով ու ոտով խոսաս, սադրես դրանով, որ ես ինչ-որ կոնֆլիկտային իրավիճակ լինի, ծեծկռտուք լինի կամ քաշքշուք լինի, դու միանգամից կգնաս հաղորդում կտաս ոստիկանությունում ու բնականաբար ով որ հաղորդումը առաջինը ինքնա տալիս, ինքն էլ շահած վիճակում պետքա լինի էլի, էտա չէ: Դու մտածում էս որ էտի ճիշտ կլնի, եթե հանկարծակի ոչ մի բան էլ չլնի, վերջի վայրանտ ժամանակ շահած կլնես: (...) Էտ պատասխանի մեջ գլոբալ ոչ մի բան չկար: Ժամանակ ձգեցիր ձգեցիր էնքան, մինչև որ տեսար՝ ֆսյո էլ չի լինում, հետո ժամանակ ձգեցիր, որ սպասի տունս կծախեմ կտամ, հիմա էլ ժամանակ էս ձգում էս տարբերակով: Այսինքն՝ միևնույնա, որ ոնց էլ որ մենք մտածենք՝ դու պարզապես ընենց էս անում, չգիտեմ ոնց որ ընենց մի հատ կոնֆլիկտային իրավիճակ ստեղծվի: Ես էտ կոնֆլիկտային իրավիճակը չեմ ստեղծելու, չեմ ստեղծելու էտ կոնֆլիկտային իրավիճակը: Իմաստ չունի, իմաստը ինչի համար, կա փաստ, որը դու չես ժխտում, որ ես քեզ փող եմ տվել: Ու կա փաստ, որը դու էլի չես ժխտում, որ դու էտ փողից ինձ ոչ մի կոպեկ հետ չես տվել: Էղելա 23 հազար, 8 հազարը վիզ էս վերցրել, ընդունեցինք տակը մնացելա 23 մինուս 8 պլյուս 300 հազար դրամի կամ միքիչ ավել գումար: Հասկացանք, ընդունում եմ, որ չունես, ընդունում եմ որ չունես, բայց չեմ հասկանում էն փաստը, որ էտ փողերից թեկուզ հազար դրամ չես, ըը կարելի էր չէ ասենք էլի, բավականին էլ լավ աշխատավարձ էս ստանում, թեկուզ մի քիչ քեզի նեղություն տայիր հա, ասենք թեկուզ մի հազար դոլար, որը չորս հինգ հարյուր հազար դրամ փողա անում, քո աշխատավարձից ասեիր, Արամ ջան, կարամ էսի տամ, հետո էլ կարամ էնի տամ, շատ լավ էս արել, որ ժամանակին էտ փողը տվել էս ինձ, ես

օգտագործել եմ իրա նպատակի համար, հիմա էլ կարում եմ ըսենց քեզի հետ տամ: Ես քեզանից ոչ ավել փող եմ ուզում, ոչ բան եմ ուզում, ես իմ տված փողն եմ ուզում, ես իմ տվածն եմ ուզում: Ասում եմ մաս-մաս տուր, եթե չէ նորից եմ ասում, էլի լավ մի տուր, քցի, խափի, բայց թող որ ես ընենմ վերջի մարդը, ում որ (...) պատգամավորը կկարենա խաբի ու գցի, կկարենա խաբի ու գցի: Էս հեռախոսը էտքանել լավը չի, զապիսի ձենը կարա լավը չլնի, չգիտեմ նաուշնիկ միացրեք, մի բան ականջակալներով բաներով նորմալ կլսեք, էն մարդիք, ումը որ պետքա էսի լսել: Ես թող լինեմ վերջին մարդը, ումը որ դու կխափես ու կքցես: Չեմ ուզում խորանամ էն բանի մեջ, որ բավականին լուրջ պաշտոնյա մարդկանց անուններ էիր տալի ու ասում էիր սրան պիտի եթացվի ինչ որ բան ասվի, նրան ինչ որ բան ասվի: Հա լավ թող գնար հասներ, բայց արած ինչ որ մի բանի համար: Դու էտ մարդկանց հետ չէիր էլ խոսացել, չէիր էլ տալու, էտ սաղիս էլ պարզա, էտ հասկացել էի, գիտեի: Ոչինչ լավ, թող չտայիիր, բայց թող մի բան արած լինեիր, բայց ոչ թե հենց ընենց տեղը վերցրել ու չես տալիս որնա:»:

«VID-20240120-WA0004» անվանումով 3 րոպե 39 վայրկյան տևողությամբ տեսաձայնագրությունում նույն անձը տեղեկություններ է հայտնում այն մասին, որ.

«Շարունակում եմ, հիմա նորից եմ կրկնում, իմ կյանքի գնով էլ լինի, էս մի բանը դու չես մարսելու, հաստա՛տ չես մարսելու, որովհետև ինչ-որ մի զսպաշապիկ, վերջիվերջո, պետք ա լինի: Պտի լինի ինչ-որ մի զսպաշապիկ, որը որ հենց մեկը՝ ամենաառաջինը, քեզ, որովհետև դու ես ամենաառաջինը, ոնց հասկանում եմ, սենց աջուձախ, են բանի՝ Պեպոյի նման, էն որ ասում ա. «Էս աշխարհը մեղրի կարաս ա, պտի զորբայություն անես՝ մեկին դեսը բրդես, մեկին դենը բրդես, մեղրը քաշես ուտես»: Այ էտի դու ես անում, էտի դու ես անում: Բայց դրա դիմաց դու ոչ մի ծառայություն ոչ ոքի չես մատուցում, դու, պոռոստը, խաբում ես, «ռեկետ» ես անում կոնկրետ, կոնկրետ, հա: Լիքը մարդիկ կան, ովքեր, որ գիտեն՝ էտ դպրոցի ծրագրի համար եկած փողերով, որ դու, քեզ ես փող եմ տվել ըտեղից: Վկայություններ կգան կտան, իմիջիայլոց, ոչ ոք քո աչքի լույսը չէր: Չհաշված, մնացած գործերով՝ կապված ում հետ, ինչ, ոնց, սաղ էլ ես ի հայտ կբերեմ, կասեմ, կասեմ: Ու դրանք սաղ ապացուցվող փաստեր են, էնպես որ չապացուցվող փաստեր չկան: Նորից եմ կրկնում, ես չեմ ուզում օրինական ընթացք տամ, ժամանակ վատնեմ դրա վրա, իմաստ չունի, ինձ ոչ ոք չի սպասելու: Եթե ինձ սպասելու լինեն, խնդրեմ, ես էտ քայլին կգնայի: Եթե դու այ էս նույն դեմքդ ցույց տված լինեիր անցած տարի՝ հունվարին, մի տարի առաջ, հա, չխաբեիր, ինձ ասեիր՝ էսօր, վաղը, հա, իմ բարեկամ մարդ, պարո՛ն Աղազարյան: Էտ ժամանակվանից, եթե մենք սկսեինք այ սենց՝ օրինական ընթացք տալուն, և այլն, և այլն, միգուցե և, շատ ավելի լավ կլիներ, միգուցե և արդեն ինչ-որ մի եզրեր կգտնեիր, կգայիր, իմ փողերը հետ տվացած կլինեիր: Բայց դու խաբելով, ձգելով բերեցիր մինչև էս վերջին կետը, էս մի տարին էլ անցավ, հիմա նոր

գնացել ես, ինքդ դու ես հաղորդում, իբրև թե, տվել: Հաղորդումը քեզանից, հետաքրքիր ա՝ ո՞վ ա վերցրել: Կամ, որ վերցրել ա, դու օրենքի ներկայացուցիչ մարդ, դու շատ լավ գիտես, թե էդ խոսակցությունը որտեղից ա եկել: Դրա զապիսներն էլ կա, որ դու ինձ ասում ես՝ ոմն մեկը իմ մասին ասել ա, թե ես էսքան փող եմ վերցրել: Ես չեմ ասում, իմեննո, հենց մենակ 23 հազար դոլար և 300 հազար՝ մի քիչ ավել դրամը, բնականաբար, հա, ես քեզ տվել եմ, բայց ես չեմ ասել, որ էտ 23 հազար դոլարից դու՝ ոչ մի բան, դու դրա վրա էիր գնում էլի, հա՞, որ էտ 8 հազարը դու ուրիշի մոտ «վիզ ես վերցրել», որ դու պտի տաս: Խնդիր չկա, լավ ես արել: Ում եմ ես ինչքան պարտք և այլն, և այլն, դրա հետ դու գործ ունեիր ժամանակին, երբ որ էն ժամանակ ինձ հետ միասին կգայիր մարդկանց պատասխան կտայիր, ոնց որ խոսք էիր տվել, որ Պողոսը, եթե փող ա տալիս ինչ-որ մի խնդրի շուրջ, ու հետո էտ խնդիրը չի լուծվում, ներողություն ենք խնդրում, փողը հետ ենք տալիս: Իսկ դու սկզբից էտի չարեցիր: Դու սկզբից թողեցիր ժամանակ անցավ, հարվածը քո վրա վերցրա, հարվածը քո վրա վերցրա, մի քիչ էլ ժամանակ ձգի, չգիտեմ՝ էս արա՛, էն արա՛: Ես էլ ժամանակ եմ ձգում, բնականաբար, ժամանակ երբ որ ձգում ես, ինչ-որ մի ժամկետ ես ասում, խոստում ես տալիս, մի բոպե:»:

«VID-20240120-WA0005» անվանումով 1 բոպե 35 վայրկյան տևողությամբ տեսաձայնագրությունում նույն անձ տեղեկություններ է հայտնում այն մասին, որ.

«Անընդհատ փորձում եմ հնարավորինս կարճ-կարճ ու բովանդակալից վիդեոներ ուղարկել, բայց չի ստացվում, վիդեոները երկար է լինում ու ուղղակի չեմ կարողանում ուղարկել, բայց հետո ինչ-որ միջոց կգտնեմ, քանի որ էտ վիդեոները մնալու են իմ հեռախոսի մեջ: Չի լինելու, նորից եմ կրկնում, չի լինելու. ամենաթանկ բանը կզոհաբերեմ իմ համար, մինչև վերջ կպայքարեմ, հա ու ամենաթանկ բանս կզոհաբերեմ, որպեսզի քո արած կեղծիքները պարզվեն, չես կարա դու ինձանից փող վերցնես ու այսպես խաբելով, ձգելով, երկարաձգելով, չգիտեմ՝ չեմ տալիսով, սրանով նրանով գնաս առաջ:

Հայկ ջան, քո մոտ կա չէ, կարծեմ, էտ ցուցակը, թե ինչքան եմ տվել, որտեղ եմ տվել և այլն: «Որտեղ եմ տվելը» գրված չի՝ ինչքան եմ տվել: Որտեղ եմ տվել՝ այդ օբյեկտի աշխատողներին, որ գան հարցնելու՝ ամեն անգամ չի, որ պատգամավորը այնտեղ է գնացել, շատ խուլ տեղ է, կասեն: Հենց գնան հարցնելու անունով բանով կասեն: Հաա, Արամի հետ եկել ա ստեղ և նստել են ստեղ և այլն, բոլորը կասեն, իսկ փողը տալու պրոցեսը, իհարկե, չեն տեսել, ոչ մեկ չի տեսել, դու տենց միամիտը չես, որ ըտենց ձևով փող վերցնես. հեսա շարունակում եմ:»:

«VID-20240120-WA0006» անվանումով 38 վայրկյան տևողությամբ տեսաձայնագրությունում նույն անձը տեղեկություններ է հայտնում այն մասին, որ.

«Կյանքիս գնով էլ լինի, ասում եմ, կյանքս էլ կզոհեմ, բայց կհանրայնացվի ու ամեն ինչ կիմացվի, դու դա հենց էնպես, հենց ընենց տեղը վերցնեց վրես ցեխ շպրտես, էդ էն ժամանակ ամենալավը ես էի չէ, որ մի հատ զանգում էիր, ասում էիր փողա պետք, վազելով բերում հասցնում էի, նորից եմ ասում՝ հետ տուր ինձանից վերցրածը, ուրիշ բան ես չեմ ուզում, մաս-մաս թեկուզ, ամենաառաջինը տվել եմ քեզ 3.000 դոլար, 3000-ից սկսի, ոչինչ:»:

«VID-20240120-WA0000» անվանումով 2 րոպե 20 վայրկյան տևողությամբ տեսաձայնագրությունում նույն անձը տեղեկություններ է հայտնում այն մասին, որ.

«Հայկ ջան, բարի օր, տես հիմա իմ իրավիճակը ոնցա, Աղազարյանին տվել եմ բավականին խոշոր գումար, բավականին լուրջ թեմայի շուրջ, սենց ասեմ հա, ինքը իմ տվացած գումարներից ոչ մի կոպեկ ինձ հետ չի տվել էտ նախկին վիդեոների մեջ, որ ուղարկել եմ քեզ նախկին ձայնայինների մեջ էտ ամենինչը կա էսօրվա դրությամբ սենցա իրավիճակը 23.000 դոլար պլուս 300.000 ՀՀ դրամից որոշակի չափով մի քիչ ավել գումար ես իրան տվել եմ, ինքը դրանից 8.000 դոլարնա ընդամենը ինձ էլ հետ չի տվել ումից, որ վերցրել եմ գնացելա խոսելա չգիտեմ ինչ-որ թղթաբանական հարցերա լուծել իրանց հետ և այլն: **Ես իրան էտ գումարների մեծ մասը տվել եմ դպրոցի ծրագրի իրականացման շուրջ, որը, որ ոչ մի բան չի եղել: Դպրոցի ծարագրի իրականացումն էլ ես էրկու բառով քեզ պատմել եմ, կա վթարային դպրոց, որը որ 4-րդ կարգի վթարայինա, որը որ պետքա քանդվի, քանդվելու տեղը, իրա տեղը սարքվումա նոր միջազգային չափանիշների համապատասխան դպրոցի մասնաշենք նու դպրոց հա, ընդեղ հողատարածքա ավելանում էտ հողատարածքի վրա բազմաբնակարան բնակելի շենք կառուցելու բանովա, այսինքն փոխադարձ շահավետ գործարքա բանի պետության հետ, այսինքն մենք ձեզ դպրոց ենք կառուցում տալի դրա դիմաց դուք մեզ տալիս եք էտ հողատարածքը և շինթույլտվություն, որպիսի բազմաբնակարան բնակելի շենք կառուցվի բնակֆոնդը թարմացվի: Հիմա էս մարդը ոչ մի բան չի արել ֆինանսավորումը էղելա նու անհատ մարդկանցից էտ մարդիք իրենց փողերը հետ են ուզում, էս մարդը փողը հետ չի տալիս, հետ չի տալիս շատ կոնկրետ ձևով ռեկետա անում, քցումա հետ չի տալիս:** Ես էլ ուրիշ տարբերակ չունեմ, եթե մինչև անգամ հիմա խելամիտ ժամկետներում ինքը կկարողանա, օրինակ կասի հա, ես էտ համաձայնությունները կբերեմ քեզ, խնդրեմ հեսա ասենք տարածքային կառավարման նախարարի համաձայնությունը, կրթության գիտության համաձայնությունը ու դա արդեն պետքա գնա դառնա ինչ-որ (չի հասկացվում) էլի կարողա ինչ-որ չափով, ինչ-որ մի, ես չգիտեմ մարդ գտնեմ, ով որ կկարողանա էս իրավիճակից ինձ էլ հանի, բայց էտ մարդը դրան չի գնում, հեսա մի վայրկյան շարունակեմ:»:

2.2) Վկա Հայկ Նազարյանը նախաքննության ընթացքում, ի թիվս այլնի, ցուցմունք է տվել այն մասին, որ 2023 թվականի ձմռանն իրեն է դիմել իր ֆեյսբուքյան ընկերներից Գոհարը և հայտնել, որ Հովիկ Աղազարյանն իր եղբորից՝ Արամից, շինթույլտվության համար տարբեր չափերի գումարներ է վերցրել: Գայանեի եղբայր Արամն իրեն պատմել է, որ գումարները տվել է Հովիկ Աղազարյանին՝ ինչ-որ մանկապարտեզ վերանորոգելու, դրա մոտ պետության կողմից իրեն հողատարածք տրամադրելու և դրա վրա էլիտար շենք կառուցելու համար: Արամն իրեն հայտնել է նաև, որ դրանից առաջ Հովիկ Աղազարյանի հետ նույնաբովանդակ գործարք են կատարել նաև Դավթաշենում: Հովիկ Աղազարյանին տրված գումարի մեջ ներառվել է նաև նրա ընկերուհու համար ընդհանուր 8.000 ԱՄՆ դոլար արժողությամբ բջջային հեռախոս և մատանի գնելու գումարը, որը գնել է Արամը և նվիրել Հովիկ Աղազարյանի ընկերուհուն, երբ Հովիկ Աղազարյանը բացակայել է Հայաստանի Հանրապետությունից:

Հայտնել է նաև, որ Արամն իրեն տեսանյութեր է ուղարկել, որտեղ պատմել է Հովիկ Աղազարյանին գումարները տալու մասին: Բացի այդ, Արամը հայտնել է նաև, որ Հովիկ Աղազարյանը հանդիսացել է իր քավորը:

Ինքն այդ հարցով հանդիպում է կազմակերպել Արամի, Գոհար Սարգսյանի և Հովիկ Աղազարյանի միջև: Հանդիպմանը ներկա են եղել նաև ևս մեկ պաշտոնատար անձ: Հանդիպման ընթացքում քննարկվել են Հովիկ Աղազարյանի կողմից գումարները չվերադարձնելու հանգամանքները, որի ընթացքում խոսակցությանը ներկա պաշտոնատար անձն Արամին հորդորել է դիմել ոստիկանություն:

Նշել է նաև, որ Արամն իրեն հայտնել է, որ Հովիկ Աղազարյանին տված գումարները վերցրել է Ալիկ, Կարո անունով գործարարներից:

Հայկ Նազարյանը լրացուցիչ հարցաքննության ընթացքում հայտնել է, որ Արամը նշված տեսաձայնագրություններն ուղարկել է իրեն, որպեսզի ինքը դրանք դարձնի հասանելի պետական կառույցներին և հարցը ստանա լուծում:

Հարցաքննության ընթացքում Հայկ Նազարյանը ներկայացրել է նաև Արամի քույր Գայանեի կողմից իրեն ուղարկված, Հովիկ Աղազարյանին հասցեագրված՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանի՝ 2023 թվականի հունիսի 7-ի գրությունը, ինչպես նաև Հովիկ Աղազարյանի կողմից Արամին հասցեագրված ձայնային հաղորդագրություն, որի համաձայն՝ Հովիկ Աղազարյանը պահանջել է վերադարձնել քաղաքաշինության կոմիտեից ստացված փաստաթղթերը և ֆինանսական վիճակի պատճառով նախագծից հրաժարվելու դիմում գրել:

2.4) ՀՀ քաղաքաշինության կոմիտեից ստացված փաստաթղթերի զննմամբ պարզվել է, հետևյալը.

«Էկո սիթի Ա.Ռ.» ՍՊ ընկերության հիմնադիր նախագահ Արամ Մկրտչյանը 2023 թվականի մայիսի 29-ին Հովիկ Աղազարյանին հասցեագրվել է գրություն, որում նշվել է հետևյալը.

«2022 թվականի օգոստոս ամսին դիմել եմ Երևանի քաղաքապետարանին, ՀՀ Կառավարությանը առաջարկով, որ Երևան քաղաքի Աջափնյակ համայնքի Մորգենթաուի անվան թիվ 126 հիմնական դպրոցի փոխարեն «Էկո սիթի Ա.Ռ.» ՍՊԸ-ն կառուցի նոր դպրոց, իսկ դրա արդյունքում ավելացած հողատարածքն էլ անհապույց տրամադրեն մեր Ընկերությանը, նոր բազմաբնակարան բնակելի շենք կառուցելու համար:

Տեղեկացնում եմ Ձեզ, որ դպրոցի շենքը վթարային է, կա համապատասխան սեյսմոլոգիական եզրակացություն, վտանգավոր է շահագործման համար, անմխիթար վիճակում է սպորտդահլիճը, դպրոցը չունի հանդիսությունների դահլիճ և գրադարան (սեյսմոլոգիական եզրակացության և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերի կրկնօրինակները ներկայացնում եմ կից):

Նոր դպրոցը համապատասխանելու է միջազգային չափանիշներին. ունենալու է գազապաստարան, բաց և փակ մարզասրահներ և ապահովվելու է անհրաժեշտ բոլոր չափանիշներով:

Պարոն Աղազարյան, Երևանի քաղաքապետը տվել է դրական եզրակացություն և պատրաստականություն է հայտնել աջակցելու ծրագրի իրականացման քննարկումներին: Իսկ ՀՀ Կառավարությանը հոդածս նամակից բավական ժամանակ է անցել, սակայն պաշտոնական պատասխան դեռևս չեմ ստացել: Հայցում եմ Ձեր աջակցությունը՝ հետամուտ լինելու սույն նախագծի ընթացքին հետևելու համար:»:

Գրությանը կից ներկայացվել է նաև «Ա.Ռ.Մ.ՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից 2022 թվականին դպրոցի վիճակի վերաբերյալ տրված եզրակացությունը, որի համաձայն՝ շենքը վտանգավոր է հետագա շահագործման համար, իսկ վերականգնման ուժեղացման աշխատանքների կատարման տեխնիկատնտեսական աննպատակահարմարությամբ պայմանավորվում է տվյալ աստիճանի վնասվածության շենքերի և շինությունների քանդումը:

Ըստ ներկայացված փաստաթղթերի՝ Արամ Մկրտչյանի գրության հիման վրա Հովիկ Աղազարյանը ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանին հասցեագրել է հետևյալ բովանդակությամբ գրություն.

«Ինձ է դիմել «Էկո սիթի Ա.Ռ.» ՍՊԸ-ի հիմնադիր Արամ Մկրտչյանը, խնդրով իմ միջնորդությունն իր ծրագիրը կյանքի կոչելու համար:

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի, «ՀՀ Ազգային ժողովի պատգամավորի գործունեության երաշխիքների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն.

Ձեզ եմ ուղարկում առաջարկությունների փաթեթը: Խնդրում եմ ուսումնասիրել այն և տալ մասնագիտական գնահատական:

Կանխավ շնորհակալություն:

Առդիր 1 էջ:

Կից փաստաթղթերը (44 էջ):»:

Ի պատասխան նշված գրությանը՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահ Արմեն Ղուլարյանը Հովիկ Աղազարյանին հասցեագրել է գրություն հետևյալ բովանդակությամբ.

«• ՀՀ քաղաքաշինության կոմիտեն ողջունում է մասնավոր ներդրողի կողմից դպրոցի շենքային պայմանների բարելավման ծրագիրը և իրատեսական է համարում ծրագրի իրականացնումը պետության և համայնքի հետ համագործակցելու շրջանակներում,

• հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցը գտնվում է համայնքային տնօրինման ներքո, առաջարկում ենք քաղաքաշինական ծրագրի իրականացմանը վերաբերող գործընթացները համաձայնեցնել Երևանի քաղաքապետարանի հետ,

• դպրոցի համար առանձնացվող հողատարածքը պետք է նախատեսել այնպես, որպեսզի դպրոցը և կառուցվող բազմաբնակարան շենքը բավարարեն քաղաքաշինական գործող նորմատիվատեխնիկական պահանջներին,

• նախագծային լուծումներին և դրանց լրակազմին ՀՀ քաղաքաշինության կոմիտեն կարող է անդրադառնալ համապատասխան առաջադրանքի առկայության պարագայում՝ քաղաքաշինական պարզ փորձաքննությունն անցած նախագծային փաստաթղթերի պետական համալիր փորձաքննության գործընթացի շրջանակներում,

• միաժամանակ առաջարկում ենք հարցը նախապես համաձայնեցնել ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Երևանի քաղաքապետարանի հետ:»:

2.5) Գոհար Սարգսյանը ցուցմունքներ է տվել այն մասին, որ Արամն իր մոտ ընկերուհի Ռուզաննա Մկրտչյանի հարազատ եղբայրն է: Արամից տեղեկացել է, որ կան ներդրողներ և ցանկանում են կառուցել շենք: Արամը ծանոթացել է Հովիկ Աղազարյանի հետ և այդ հարցով դիմել է նրան, սակայն Հովիկ Աղազարյանը նրան խաբել է, վերցրել 23.000 դոլար գումար շենքի կառուցման շինթույլտվություն տալու հարցը լուծելու համար, սակայն այդ գործընթացը ձգձգել է, իսկ այն անձինք ովքեր այդ գումարը տվել են Արամին՝ պահանջել են վերադարձնել: Իր ներկայությամբ Արամը զանգահարել է Հովիկ Աղազարյանին և կայացած զրույցի ընթացքում վերջինը չի հերքել, որ գումարները վերցրել է, սակայն հայտնել է, որ գումար չունի, որպեսզի վերադարձնի, կարող է ինքը խոսել այն մարդկանց հետ, ովքեր Արամին գումարներ են տվել:

Գոհար Սարգսյանը հայտնել է նաև, որ այդ մասին պատմել է իր ծանոթ Հայկ Նազարյանին և նրան ծանոթացրել Արամի հետ: Դրանից հետո Հայկ Նազարյանի նախաձեռնությամբ ինքն ու Արամը հանդիպել են Հովիկ Աղազարյանին, հանդիպմանը ներկա են եղել նաև անծանոթ մարդիկ: Հանդիպման ընթացքում Հովիկ Աղազարյանը վիճաբանել է, որպեսզի թույլ չտա, որ իրենց մոտ առկա ձայնագրությունները ներկայացնեն: Դրանից հետո ինքը վիճել է Արամի և նրա քրոջ հետ և այդ օրվանից Արամից որևէ տեղեկություն չունի:

Հավելել է, որ ըստ Արամի՝ Հովիկ Աղազարյանը հանդիպել է Արամին գումար տված անձանցից մեկին և գրել ստացական այն մասին, որ վերցրել է 8.000 ԱՄՆ դոլար, որը պարտավորվում է վերադարձնել:

Նշել է նաև, որ Արամն իրեն ուղարկել է Հովիկ Աղազարյանի հետ ունեցած հեռախոսային խոսակցությունների ձայնագրությունները, որոնք ինքն ուղարկել է Հայկ Նազարյանին:

2.6) Գոհար Սարգսյանի ցուցմունքին նույնաբովանդակ ցուցմունք է տվել նաև Արամ Մկրտչյանի քույրը՝ Ռուզաննա Մկրտչյանը՝ հայտնելով, որ գումարի չափի վերաբերյալ տեղեկություններ չունի:

2.7) Նախաքննության ընթացքում զննության է ենթարկվել Հայկ Նազարյանի բջջային հեռախոսը, որի արդյունքում, ի թիվս այլնի, հայտնաբերվել են ձայնային հաղորդագրություններ, որոնք վկայում են այն մասին, որ Հովիկ Աղազարյանը Արամ Մկրտչյանից ծրագրի իրագործմանն աջակցելու նպատակով գումար է վերցրել, սակայն չի կարողացել կատարել իր կողմից խոստացած պայմանավորվածությունը, միաժամանակ՝ հրաժարվել է վերադարձնել գումարը:

Ընդ որում, այդ ձայնագրություններով պարզվել է, որ Արամ Մկրտչյանը կաշառքի գումարն այլ անձանցից վերցրել է պարտքով, ովքեր պահանջում են վերադարձնել այն, իսկ Արամ Մկրտչյանն էլ իր հերթին այդ գումարը պահանջում է Հովիկ Աղազարյանից: Իր հերթին Հովիկ Աղազարյանը հրաժարվում է վերադարձնել գումարը՝ առաջարկելով հանդիպել տվյալ անձանց և լուծել Արամ Մկրտչյանի խնդիրները:

Մասնավորապես, ձայնագրություններով, ի թիվս այլնի, Արամ Մկրտչյանի և Հովիկ Աղազարյանի միջև արձանագրվել են հետևյալ խոսակցությունները.

« (...) Հովիկ Աղազարյան - Գալիս եմ էտ յանները մտնեմ Մերգելյան, կզանգեմ էլի մի կես ժամից:

Արամ Մկրտչյան - Հա, բայց ի՞նչ ենք անելու: Գալը գալիս եք, լավ, ի՞նչ ենք անելու, եթե էտ նույն՝ էրեկվա բանն ենք խոսալու (...):

Հովիկ Աղազարյան – Հա, էրեկվա բանն ենք խոսալու:

Արամ Մկրտչյան - Չէ, ի նկատի ունեմ, եթե մեկ ա, չեք տալու, պետք ա ինչ-որ, ուրիշ (...):

Հովիկ Աղազարյան - Հա, էն իմ ասած ձևով եմ տալու, էն բանն էլ, էն նամակն էլ, բանը հետ կտաս, քաղշինի նամակն էլ հետ պիտի տաս:

Արամ Մկրտչյան - Քաղշինի նամակն էլ տպած վիճակում իմ մոտ էլ չկա, էտի էլեկտրոնային ուղարկել եք:

Հովիկ Աղազարյան – Ոչինչ, նամակ կգրես, որ դու ֆինանսական բաների պատճառով, շնորհակալություն, հրաժարվում եմ էտ պրոեկտից:

Արամ Մկրտչյան - Նախևառաջ ասեմ, ես էտի պատրաստ եմ գրելու, էտի խնդիր չի (...):

Հովիկ Աղազարյան - Շատ լավ:

Արամ Մկրտչյան - էտի մեկ, երկրորդ հերթին էլ, էտ նամակի մեջ եսիմ ինչ ինքը ինչ-որ, Դուք կարդացե՞լ եք էտ նամակը: Ինքը եսիմ ինչ էլ չի գրել:

Հովիկ Աղազարյան - Հա, հա:

Արամ Մկրտչյան - Ինքը եսիմ ինչ էլ չի գրել:

Հովիկ Աղազարյան - Ամեն ինչ էլ գիտեմ, Արամ ջան, չխոսանք էտ մասին, չկրկնվենք էլի, որովհետև ուրիշ ձև էր, հետո ուրիշ ձև դառավ, հետո ուրիշ ձև դառավ, հիմա չխոսանք էտ մասին, հիմա հարցը պետք ա լուծենք, լուծենք, ես դեմ չեմ էտ հարցը լուծելուն, էտ ա խնդիրը, եթե էտ տարբերակով դու, ճիշտ ես ասում (չի հասկացվում), դու համաձայն ես՝ գա, եթե համաձայն չես՝ չգամ, էտքան բան:

Արամ Մկրտչյան - Ո՞ր տարբերակով:

Հովիկ Աղազարյան - Որ ես էտ տղերքին տենամ:

Արամ Մկրտչյան - Դե չեն ուզում իրանք քեզ տենան, գալու ենք նույն բանը նստենք խոսանք:

Հովիկ Աղազարյան - Ուրեմն, անջատում եմ ես հեռախոսը, ֆսյո:

(...)»:

Հովիկ Աղազարյան - Հիմա ես էտ փողը պիտի տամ, հիմա ես չեմ կարա ևս ութ հազար հիմա տամ:

Արամ Մկրտչյան - Ես չեմ ասում ութ հազար տուր, ինչքան կարաս էնքանը գոնե տուր, մի բան տամ, պրծնեմ: Գոնե էս նոր տարին թող անցնի:

Հովիկ Աղազարյան - Ինչքան տամ, թե չտամ, թեկուզ հազար էլ տամ, պիտի ես իրանց հետ հանդիպեմ, նոր տամ, թե չէ չեմ տալու:

Արամ Մկրտչյան - Դե չեն ուզում քո հետ հանդիպեն:

(...):

Հովիկ Աղազարյան - Ախպեր, դե հանդիպացրու ընձի, ես քեզի փրկեմ, ի՞նչ ես ուզում ինձանից:

Արամ Մկրտչյան - Այ ցավդ տանեմ, բան չեմ ուզում, բան չեմ ուզում. ես ասում եմ՝ գոնե ինչքան կարաս, էտքանը տուր, դրանց բերանը փակեմ: Եթե՝ չէ, չեն գալի հանդիպման. չգիտեմ՝ վախում են, ինչ են անում: (...) »:

2.8) Նախաքննությամբ պարզվել է, որ Արամ Մկրտչյանը 2024 թվականի փետրվարի 15-ից լքել է Հայաստանի Հանրապետությունը և չի վերադարձել:

ՀՀ Սահմանադրության 96-րդ հոդվածի համաձայն՝

«(...)

2. Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում կարող է հարուցվել միայն Ազգային ժողովի համաձայնությամբ: Պատգամավորն առանց Ազգային ժողովի համաձայնության չի կարող զրկվել ազատությունից, բացառությամբ երբ նա բռնվել է հանցանք կատարելու պահին կամ անմիջապես դրանից հետո: Այս դեպքում ազատությունից զրկելը չի կարող տևել յոթանասուներկու ժամից ավելի:

Պատգամավորին ազատությունից զրկելու մասին անհապաղ տեղեկացվում է Ազգային ժողովի նախագահը»:

«Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին միջնորդագիրը գլխավոր դատախազը ներկայացնում է Ազգային ժողովի նախագահին: Ազգային ժողովի նախագահն այդ մասին անմիջապես տեղեկացնում է միջնորդագրում նշված պատգամավորին, իսկ դրա անհնարինության դեպքում հանդես է գալիս հայտարարությամբ: Միջնորդագրին կցվում է պատգամավորի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելուն կամ նրան ազատությունից զրկելուն համաձայնություն տալու մասին Ազգային ժողովի որոշման նախագիծը:

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 38-րդ հոդվածի համաձայն՝

«1. Մինչդատական վարույթի ընթացքում հսկող դատախազը՝

(...):

14) իրավասու վերադաս դատախազին առաջարկում է դիմել իրավասու մարմիններ՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրանց ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու միջնորդությունով.

(...)»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն՝

« 1. Մինչդատական վարույթի ընթացքում վերադաս դատախազը՝

(...):

9) հսկող դատախազի առաջարկությամբ դիմում է իրավասու մարմիններ՝ քրեական հետապնդման անձեռնմխելիությունից օգտվող անձանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրանց ազատությունից զրկելու համաձայնություն ստանալու միջնորդությունով.

(...)»:

ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի համաձայն՝

«1. Կաշառք ստանալը՝ պաշտոնատար անձի կողմից անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը, պահանջելը, կաշառք տալու առաջարկ ներկայացնելը կամ կաշառք տալու առաջարկը կամ խոստումն ընդունելը՝ իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կաշառք տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին գործողություն կատարելու կամ չկատարելու համար՝

(...):

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

(...):

3) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ յոթից տասներկու տարի ժամկետով»:

ՀՀ քրեական օրենսգրքի 438-րդ հոդվածի համաձայն՝

«1. Պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած ազդեցությունը շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով օգտագործելը՝ պաշտոնատար անձի նկատմամբ ունեցած իրական կամ ենթադրյալ ազդեցությունն օգտագործելու նպատակով անձամբ կամ միջնորդի միջոցով իր կամ այլ անձի համար գույք, ներառյալ դրամական միջոց, արժեթուղթ, վճարային այլ գործիք, գույքի նկատմամբ իրավունք, ծառայություն կամ որևէ այլ առավելություն ստանալը, պահանջելը, տալու առաջարկ ներկայացնելը կամ տալու առաջարկը կամ խոստումն ընդունելը՝ ապօրինի վարձատրություն տվողի կամ նրա մատնանշած անձի օգտին պաշտոնատար անձի կողմից իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով՝ գործողություն կատարելու կամ չկատարելու համար՝

(...):

3. Սույն հոդվածի 1-ին կամ 2-րդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

(...):

2) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ հինգից տասը տարի ժամկետով:»:

Այսպիսով, գնահատելով քրեական վարույթով հավաքված ապացույցները վերաբերելիության, թույլատրելիության, հավաստիության, իսկ բոլոր ապացույցների համակցությունը՝ բավարարության տեսանկյունից՝ պետք է արձանագրել, որ առկա են բավարար փաստեր ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Հովիկ Աղազարյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 438-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 435-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով հանրային քրեական հետապնդում հարուցելու համար, ուստի հիմք ընդունելով ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Հովիկ Հովսեփի Աղազարյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու համաձայնություն ստանալու համար ՀՀ Ազգային ժողով դիմելու վերաբերյալ հսկող դատախազի առաջարկությունը և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 96-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքի 108-րդ հոդվածով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով,

Մ Ի Ջ Ն Ո Ր Դ Ո Ւ Մ Ե Մ՝

Տալ համաձայնություն՝ ՀՀ Ազգային ժողովի ութերորդ գումարման պատգամավոր Հովիկ Հովսեփի Աղազարյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու մասին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ՝

ԱՆՆԱ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ